ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հոդվածում ներկայացված է սյունեցի բանաստեղծ Գագիկ Դավթյանի պոեզիայի ընդհանուր դերը ժամանակակից հայ քնարերգության համապատկերում: Այս ուսումնասիրությունն արժեքավոր ներդրում է հայ գրականագիտության-քննադատության մեջ, հատկապես այն իմաստով, որ նման վերլուծությունները սակավ են և միտված են ժամանակակից գրականության գնահատման հարցադրումներ բարձրացնելուն:

Բանալի բառեր՝ *պոեզիա, անկախության շրջան, ինքնախոսություն, մարդ, կատարելություն, պոեմ, պատերազմ, աղոթք:*

Անկախության շրջանի պոեզիային անդրադառնալիս հազվադեպ կարելի է կիրառել քնարերգություն եզրույթը, քանզի գրանյութն ինքնին հաճախ նման հնարավորություն չի ընձեռում: Բանաստեղծությունից դուրս է մղվել մեղեդայնությունը, իսկ քնարականությանը փոխարինելու է եկել ամենախոսությունը: Գագիկ Դավթյանի ձեռագիրը տարբերակելի է ժամանակակից բանաստեղծության համապատկերում, քանզի հենց քնարերգություն է ստեղծում բանաստեղծը՝ պահպանելով լավագույն ավանդներն ու դրանց զուգակցելով նոր մտայնություններ ու բանաստեղծական իրացումներ:

Բանաստեղծը տարիներ ի վեր հաստատուն է եղել իր հավատամքին և խոսքի կառուցման ճանապարհին առաջնորդվել է տեքստային նրբագծերի ու ապրումի բանաձևման սկզբունքով.

Ու մարող մոմը լուսնի
Մեր կարոտից
*Պիտի հալվեր ամբողջովին*1:

1980 թվականին լույս է տեսնում Գագիկ Դավթյանի «Մենախոսություն» բանաստեղծությունների ժողովածուն, որը լավ արձագանք է գտնում գրական միջավայրում: Ընդանրապես մենախոսության-ինքնախոսության, կամ ինքն իրեն նամակ գրելու ոճային հնարքը հատուկ է Գագիկ Դավթյանին: Բանաստեղծը մեկուսացած, ինքն իր անձից օտարված (միջնադարյան ծաղկողների նման) պատկերում է իր հայեցումն ու զմայլվում աշխարհի գեղեցկությամբ.

Կանաչ տերև... հողին
ու տերևին քնած
ադամանդե շաղիկ,–
գիշերային արցունք,
ադամանդում երգող
կանաչ լույսի կաթիլ (էջ 15)...

Այնուհանդերձ կյանքի բոլոր երանգներն է տեսնում բանաստեղծը, թե՛ չկիսվող ցավը, թե՛ անդունդներում կտոր-կտոր լինելը, թե՛ դատարկ շշին հայ-հոյելը, որոնք բոլոր ժամանակների համար են: Մենախոսություն, քանզի Նարեկացու պես Գագիկ Դավթյանը ևս ընդդիմանում է Ամենակարողի արարած աշխարհի և մարդու անկատարության դեմ.

Համբերության կաթը
թթվում – քարանում է մայրական կրծքում,
ավարտի ակնկալիքը
դառնում է երկաթի ժանգոտ մի կտոր,
մխրճված հոգու
ուղիղ կենտրոնում (էջ 12)...

Եվ երազներ պիտի հյուսեր երկնքում զրուցակից փնտրող բանաստեղծն ու պատահական չէ, որ 1983 թվականին լույս տեսած գիրքը վերնագրվում է «Երազների երկինք» խորագրով: Երկնի կապույտ օվկիանում մարդը միայնակ է և միակ ապավենն ու փրկության կղզին՝ Աստված է, որին ամբողջ կյանքում փնտրում է մարդը.

Աջ եմ նայում՝ ջուր է,
ձախ եմ նայում՝ ջուր է,
սակայն ո՜ւր է, Աստված,
ախ, ջրի շունչն ո՞ւր է (էջ 82)...

Բանաստեղծը դարձյալ սկսում է իր մենախոսությունների շարքը, քանզի անընդհատ վերադառնում է իր ակունքին: Ընդհանրապես Գագիկ Դավթյանի բոլոր գրքերում կա «Մենախոսություն» վերնագրով շարք, որն ընթերցողից զատ ուղղակի և անմիջական հասցեատեր ունի՝ Ստեղծողը: Եվ պատահական չէ, որ գրողն անընդհատ փնտրում է վերադարձի ուղին: 1987 թվականին լույս տեսած «Վերադարձ» ժողովածուն հենց այդ տրամադրությունների արգասիքն է: Բանաստեղծը բառեր է փնտրում՝ ակունքին վերադառնալու համար, հետո՝ աղերսներ է հղում, թվում է սիրեցյալին, ում անընդհատ փնտրում է և ումից անընդհատ ուզում է հեռանալ, սակայն ներքին թաքնված այլաբանություն կա այս շարքում: Բանն այն է, որ Գագիկ Դավթյանը սիրո հոգևոր բնույթն է ընդգծում, ոչ առարկայականը, ո՛չ բնազդայինն ու մարմնականը.

Կանչում ես ինձ
և հորինում
խոչընդոտներ հազար ձևի...

Քշում ես ինձ,
և կառչում ես դու իմ թևից...

Գնում եմ ես,
և գալիս ես իմ ետևից (էջ 135)...

Նման խոսքեր կարելի է ասել թե՛ սիրելի էակին, և թե՛ Աստծուն, որի հետ անընդհատ հաղորդակցություն է փնտրում բանաստեղծը: Այս երկիմաստությունը մատնում է հաջորդ՝ «Մենք՝ քո ստեղծածը» շարքը: Սույն շարքի բանաստեղծությունները յուրովի խաղային բնույթ ունեն: Բանաստեղծությունները՝ գլխի, քթի, բերանի ու ձեռքերի պատկերումով այլաբանորեն պատկերում են մարդու այն կենսական զգայարանները, որոնցով նա հաղորդակցվում է աշխարհի հետ:

2007 թվականին լույս տեսած «Անվերջ սկիզբ» ժողովածուն օղակում է բանաստեղծի գեղագիտական հայացքների շղթան: Սկիզը՝ Տերն է, ամեն օրն է, որ պիտի ապրես, չնայած օրերն այնպիսին են, որ.

1000 դրա՞մը...
Դա ի՞նչ փող է, որ...

Եվ ընդհանրապես, դա փո՞ղ է, միթե,
այն 100 – ի մոտ,
որի գոյության մասին չգիտեն
ոչ քո սիրասուն ու խանդոտ կինը,
ոչ... հարկայինը (էջ 193)...

Գագիկ Դավթյանի այս գիրքն առավել հագեցած է ներկա ժամանակների անմշակույթ կյանքի հղումներով: Բանաստեղծության մեջ կերպավորվում են ստրուկը, կապիկը, մորուքավոր ջահելը, երթևեկության կանոններից անտեղյակ տաքսու վարորդը և կյանքը դառնում է 5000 դրամանոց: Անշուշտ սա հոգևոր-մշակութային արժեկարգի մեր օրերի հակակշիռն է: Ծաղրական ու հեգնական երանգներ են ի հայտ գալիս բանաստեղծական բնագրում, և բնական է, քանզի բանաստեղծը ձգտում է թեկուզև ծաղրի ու երգիծանքի միջոցով սթափեցնել մարդուն և ցույց տալ դեպի ակունք, դեպի սկիզբ տանող ճամփան.

Եթե կամավոր ստրուկը մի օր
իր նեղլիկ խցում արթնանում քնից,
աչքերը բացում,
և չորուկ թախտի տակավին պառկած,
աշխարհից ծածուկ
հայտարարում է ինքն իրեն արքա,

նշանակում է
այդ գիշեր կապույտ երազ է տեսել (էջ 213)...

Ընդհանրապես Գագիկ Դավթյանի քնարերգության մեջ առանձնահատուկ տեղ ունի երկիրը: Դեռ առաջին բանաստեղծություններից սկսած բա-

նաստեղծն ինքն իրեն մասնատում է երկրի համար: Սա վերամբարձ հայրենասիրությունը չէ, այլև երկրի հետ մեկ ամբողջ լինելու գիտակցություն: Այս երևույթը ցայտուն կերպով արտահայտված է նաև «Սյունիք» օրհներգում, որը նաև Գագիկ Դավթյան մարդու հոգևոր աշխարհի կերպարային բնութագիրն է:

Հայրենիք-երկիրը հատկապես խտացված է Գագիկ Դավթյանի պոեմներում: Երկրի ոգին արտահայտվում է «Շարունակվող պատերազմ» հերոսական պոեմում: Ճակատագրի բերումով 25-ամյա մեր անկախությունը ուղեկցվում է անընդհատական պատերազմով և Գագիկ Դավթյանի այս պոեմը, որը գրվել է գրեթե 40 տարի առաջ, այսօր էլ արդիական է: Բանաստեղծը աշխարհի պատերազմների դեմ... պատերազմում է խոսքով...

Պատերազմները
շարունակվում են դեռ հողագնդում,
պատերազմները
չեն դարձել երազ,

և ընդդեմ բոլոր պատերազմների
շարունակվում է մեկ այլ պատերազմ (էջ 254)...

«Խոստովանություն» պոեմում կորցրած երկրի ցավի կուտակումից է փորձում ազատագրվել բանաստեղծը, սակայն ինքն էլ գիտի, որ ցավը չի կիսվում: Բանաստեղծը Խորենացու հավերժ արդիական Ողբի նման կոչ է անում ներհայեցման, ինքներս մեզ ճանաչելու և անցյալի սխալները դարձյալ չկրկնելու համար: Ու հնչում է բանաստեղծի մռունչը սթափեցման.

Եվ ուխտամոռ եղանք,
երախտազանց,
գծուծ,
չընկամ,
նախանձ,
քինոտ,
անսանձ,
կասկածամիտ,
գալարվում էր մեր մեջ ոխի ծուխը կրծու,
և ննջում էր ծպտյալ խարդավանքի քամին

(էջ 257)...

Չնայած, որ այս պոեմն ասելիքի որոշակիության հարցում, կարելի է ասել չի ամբողջանում, քանզի բանաստեղծն ազգային ինքնագիտակցության ու պատմության խորհուրդն է թիրախավորել, որն ավելի մեծ ընդհանրացումներ է պահանջում, այդուհանդերձ մտորումների ու խորհելու առիթ է տալիս և ուղղորդում է ինքնահայեցման՝ յուրաքանչյուր ոք նախ իր և իր տեսակի ներսում պետք է փնտրի թերություններն ու առկա խնդիրների ակունքը:

Ընդհանրապես Գագիկ Դավթյանը հատուկ վերաբերմունք ունի դասական

ժանրերի նկատմամբ ու մեր օրերում վերակենդանացնում է վարքագրության ժանրը: Անշուշտ, ոչ միջնադարյան վարքագրության իմաստով, սակայն ժանրի մի շարք հատկանիշներ հեղինակը պահպանել է: «Վարք Բաբիկի» պատմահոգեբանական պոեմում Սյունյաց Անդովկ իշխանի որդի Բաբիկի կյանքի էպիկական պատմությունը ներկայացվում է քնարական շնչով ու անհատի ներաշխարհային քարտեզագրումով: Փուլ-փուլ բացվում է Բյուզանդիայում գերի Բաբիկի հերոսացման պատմությունն ու անհատականության կերտման հոգեբանական անցումները: Ի վերջո վայրիվերումների միջով անցած Բաբիկը հոգևոր նիրվանա է գտնում Աստծո հետ՝ նրան ուղղելով իր աղոթքն հայրենյաց.

Տեր,
բերկրություն տուր մեզ այնքան տարի,
որքան աշխարհում տեսել ենք չարիք,
տուր խաղաղություն մեզ այնքան դարեր,
որքան աշխարհում լույս ենք արարել (էջ 332):

Պոեմում ոչ միայն պատմական անհատի բնութագրումն ու կենսապատումն է առանցքային, այլև ընդհանրապես մարդու, ով պատասխանատվություն է կրում ոչ միայն իր անձի, այլև հանուրի համար:

Եվ ահա, Գագիկ Դավթյանն ամբողջացրել-լրել է իր գեղարվեստական մոլորակն, ու իր ամբողջ ստեղծագործությունն ամփոփել է «Որպես լույս ու խիղճ» գրքում, որը լավագույնս ցույց է տալիս ոչ միայն 1980-ից մինչև այսօր գրողի ներքին զարգացումները, այլև այն հոգևոր-գեղարվեստական ու մշակութային հարստությունը, որն ինքն իրեն տրոհելով ու մասնատելով որպես ժառանգություն սերունդներին է թողնում բանաստեղծը:

Այսինքն, Գագիկ Դավթյանն իր ստեղծագործությամբ, ինչպեսև կատարած թարգմանություններով, գրական-գեղարվեստական այն մթնոլորտն ու միջավայրն է ստեղծում, որը հաղորդակցվում է մարդու ներաշխարհի հետ, տանում նրան ինքնահայեցման և ինքնամաքրման ճանապարհով՝ մի տեսակ վերադարձնելով ակունքին՝ սկզբին:

ТВОРЧЕСКИЙ МИР ГАГИКА ДАВТЯНА - АРМЕН АВАНЕСЯН - В период независимости мелодизм почти выпал из поэзии, и лиризм заменил слово. Почерк Гагика Давтяна является отличительным в контексте современной поэзии, потому что он создает лиризм, сохраняя лучшие вклады и сочетая их с новыми мыслями и поэтическими продажами.

В сборнике стихов Гагика Давтяна «Монолог» писатель использует стиль монолога - самостоятельного изучения или самописи. Поэт изолирован, изображает себя из собственного образа и смотрит на красоту мира.

Идея книги «Неба грез» заключается в том, что в голубом океане человек один и единственное доверие и остров спасения - Бог, который всю жизнь ищет человека.

В книге «Бесконечное начало» - это цепь эстетических взглядов поэта. Начало это Господь, каждый день, который человек будет жить.

В лирическое поэзии Гагика Давтяна занимает особое место ограз родини. Еще с первых стихов поэт не отделяет себя от родины.

Образ Родины особенно сконцентрирован в поэмах Гагика Давтяна. Духовность выражена в героической поэме «Продолжающаяся война». Поэт ведет войну против войн ...

В поэме «Исповедь» писатель пытается избавиться от боли утраченной родины, но он также знает, что боль не разделяется.

Вообще Гагик Давтян имеет особое отношение к классическим жанрам и раскрывает жанр современного поведения. Эпическая история жизни Бабика, сына Андовка, представлена в историко-психологической поэме «Варк Бабик» лирическим дыханием и индивидуальной картографией.

Гагик Давтян создает литературную и художественную атмосферу, в которой он общается с внутренним миром своего творчества.

Ключевые слова: *поэзия, период независимости, речи, человек, совершенство, поэма, война, молитва.*

CREATIVE WORLD OF GAGIK DAVTYAN - ARMEN AVANESYAN - In the period of independence, melody almost fell out of poetry, and lyricism replaced the word. The handwriting of Gagik Davtyan is distinctive in the context of modern poetry, because it creates lyricism, preserving the best contributions and combining them with new thoughts and poetic sales.

In the collection of poems by Gagik Davtyan «Monologue» the writer uses the style of a monologue - self-study or self-writing. The poet is isolated, depicts himself from his own image and looks at the beauty of the world.

The idea of the book «Heaven of Dreams» is that in the blue ocean, man is the one and only trust and island of salvation - God, who has been searching for man all his life.

In the book The Infinite Beginning, this is the chain of the poet´s aesthetic views. The beginning is the Lord, every day that man will live.

In the lyric poetry of Gagik Davtyan occupies a special place ograz Rodini. From the very first verses the poet does not separate himself from his homeland.

The image of the motherland is especially concentrated in the poems of Gagik Davtyan. Spirituality is expressed in the heroic poem «The Continuing War». The poet wages war against wars ...

In the poem «Confession» the writer tries to get rid of the pain of the lost homeland, but he also knows that the pain is not shared.

In general, Gagik Davtyan has a special relationship to classical genres and reveals the genre of modern behavior. The epic story of the life of Babik, the son of Andovka, is presented in the historical-psychological poem «Vark Babik» by lyrical breathing and individual cartography.

Gagik Davtyan creates a literary and artistic atmosphere in which he communicates with the inner world of his work.

Keywords: *poetry, independence period, speeches, man, perfection, poem, war, prayer.*